


« Բանկային համակարգի 2008 թ.-ի 3-րդ եռամսյակի գործունեության համառոտ վերլուծությունը

2008 թ.-ի 3-րդ եռամսյակի ընթացքում « Բանկային համակարգի գործունեության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ինչպես երկրորդ եռամսյակում, այնպես էլ հաշվետու եռամսյակում աճ է գրանցվել գրեթե բոլոր հիմնական ցուցանիշների գծով: Այսպես, համակարգի ընդհանուր ակտիվները հաշվետու եռամսյակում աճել են 6.4 %-ով կամ 58.2 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 966.7 մլրդ դրամ: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա նույն եռամսյակի ընթացքում ընդհանուր ակտիվներն ավելացել էր 77.2 մլրդ դրամով կամ 12.7 %-ով: Հարկ է նաև նշել, որ ընթացիկ տարվա առաջին ինն ամիսների ընթացքում ընդհանուր ակտիվներն աճել են 23.5 %-ով կամ 183.8 մլրդ դրամով, որը նախորդ տարվա համանուն ցուցանիշը գերազանցել է 28.6 %-ով կամ 40.9 մլրդ դրամով (նախորդ տարվա առաջին ինն ամիսների ընթացքում ակտիվների աճը կազմել է 26.3 % կամ 142.9 մլրդ դրամ): Ընդհանուր ակտիվների վերը նշված աճը հիմնականում իր արտացոլումն է գտել ֆիզիկական անձանց և տնտեսությանը տրամադրված վարկերում:

Վարկային ներդրումները 3-րդ եռամսյակի ընթացքում ավելացել են 14.0 %-ով կամ 76.6 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 0.1 %-ով կամ 57.0 մլն դրամով և 3-րդ եռամսյակի վերջում կազմել, համապատասխանաբար, 624.2 և 77.6 մլրդ դրամ, ընդ որում անցած տարվա 3-րդ եռամսյակի ընթացքում վարկային ներդրումներն աճել էին 20.0 %-ով կամ 61.5 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 0.7 %-ով կամ 0.7 մլրդ դրամով: Հարկ է նշել, որ ընթացիկ տարվա առաջին ինն ամիսների ընթացքում վարկային ներդրումներն աճել են 46.1 %-ով կամ 197.0 մլրդ դրամով, ներդրումներն արժեթղթերում նվազել 18.4 %-ով կամ 17.4 մլրդ դրամով այն դեպքում, երբ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում վարկային ներդրումներն աճել էին 45.1 %-ով կամ 114.7 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 9.1 %-ով կամ 8.2 մլրդ դրամով: 2008 թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ համակարգի վարկային ներդրումները կազմել են ընդհանուր ակտիվների 64.6 %-ը, ընդ որում տնտեսությանը տրված վարկերի բաժնեմասը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 51.5 %-ը կամ 321.4 մլրդ դրամ, և այս ցուցանիշը հաշվետու եռամսյակի ընթացքում աճել է 26.9 %-ով կամ 68.1 մլրդ դրամով, որը 2007 թ.-ի 3-րդ եռամսյակի համանուն ցուցանիշը գերազանցել է 105.2 %-ով կամ 34.9 մլրդ դրամով: Միաժամանակ նշենք, որ ընթացիկ տարվա առաջին ինն ամիսների ընթացքում տնտեսությանը տրված վարկերի աճը կազմել է 54.3 % կամ 113.1 մլրդ դրամ, իսկ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում այն կազմել էր 42.5 % կամ 56.2 մլրդ դրամ (աճը նախորդ տարվա առաջին ինն ամիսների աճի համեմատ կազմել է 101.3 % կամ մոտ 56.9 մլրդ դրամ):

2008 թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ վարկերի կառուցվածքը՝ ըստ տնտեսության ճյուղերի (մլրդ դրամ)




Ֆիզիկական անձանց տրված վարկերի աճը հաշվետու եռամսյակում կազմել է 1.3 % կամ 3.6 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի նույնանուն ցուցանիշին զիջել է 87.7 %-ով կամ 26.0 մլրդ դրամով: Ընթացիկ տարվա երրորդ եռամսյակի վերջում ֆիզիկական անձանց վարկերի ծավալը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 46.8 %-ը կամ 292.4 մլրդ դրամ, որի կառուցվածքում սպառողական վարկերը կազմել են 226.9 մլրդ դրամ, այդ թվում հիփոթեքային վարկերը՝ 84.1 մլրդ դրամ: Հաշվետու

եռամսյակի ընթացքում սպառողական վարկերի ծավալն աճել է 16.9 %-ով կամ 32.8 մլրդ դրամով, հիփոթեքային վարկերինը՝ 15.3 %-ով կամ 11.2 մլրդ դրամով, ընդ որում 2007 թ.-ի 3-րդ եռամսյակում վերը նշված ցուցանիշների համապատասխան աճերը կազմել են 18.0 % կամ 16.4 մլրդ դրամ և 33.8 % կամ 11.6 մլրդ դրամ: Եթե նախորդ տարվա առաջին ինն ամիսների ընթացքում ֆիզիկական անձանց վարկերի ծավալն աճել էր 67.8 %-ով կամ 69.3 մլրդ դրամով, այդ թվում սպառողական վարկերի ծավալը 45.7 %-ով կամ 33.7 մլրդ դրամով, իսկ հիփոթեքային վարկերինը՝ 96.1 %-ով կամ 22.5 մլրդ դրամով, ապա այս տարվա նույն ժամանակամիջոցում ֆիզիկական անձանց վարկերի ծավալն աճել է 41.0 % կամ 85.0 մլրդ դրամով, այդ թվում 77.0 %-ով կամ 98.7 մլրդ դրամով աճել է սպառողական և 55.7 %-ով կամ 30.1 մլրդ դրամով հիփոթեքային վարկերի ծավալը: Միևնույն ժամանակ նշենք, որ այս տարվա սեպտեմբերի 30-ի դրությամբ սպառողական վարկերի ծավալը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 36.3 %-ը (տեսակարար կշիռը հունիսի 30-ի համեմատ աճել է 0.9 տոկոսային կետով), իսկ հիփոթեքային վարկերինը՝ 13.5 %-ը (տեսակարար կշիռը հունիսի 30-ի համեմատ աճել է 0.2 տոկոսային կետով):

Երրորդ եռամսյակի ընթացքում ընդհանուր ակտիվների ամենաբարձր տոկոսային աճը գրանցվել է «Պրոկրեդիտ Բանկի» մոտ՝ 49.95 %, որը դրամական արտահայտությամբ կազմել է մոտ 3.6 մլրդ դրամ, իսկ ամենաբարձր նվազումը՝ «ՎՏԲ Հայաստան Բանկի» մոտ՝ 12.77 % կամ 14.4 մլրդ դրամ: Սակայն պետք է նշել, որ բացարձակ մեծությամբ ընդհանուր ակտիվների առավելագույն աճ ապահովվել է «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկի» կողմից և այն կազմել է 13.2 մլրդ դրամ, երկրորդ ցուցանիշը ապահովել է «Ամերիաբանկը»՝ 11.5 մլրդ դրամ, իսկ երրորդը՝ «Արդշինինվեստբանկը», որը կազմել է 9.2 մլրդ դրամ: Տնտեսությանը վարկավորման ամենամեծ ծավալներն ապահովել են «ՎՏԲ Հայաստան Բանկը»՝ 41.8 մլրդ դրամ, «Արդշինինվեստբանկը»՝ 41.4 մլրդ դրամ, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանը»՝ 36.7 մլրդ դրամ, «Յունիբանկը»՝ մոտ 30.8 մլրդ դրամ և «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկը»՝ 25.8 մլրդ դրամ, իսկ ֆիզիկական անձանց վարկավորման գծով առաջատար դիրքերում են գտնվում «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկը»՝ 45.9 մլրդ դրամով, «Արդշինինվեստբանկը»՝ 35.6 մլրդ դրամով, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանը»՝ 33.4 մլրդ դրամով, «ՎՏԲ Հայաստան Բանկը»՝ 32.9 մլրդ դրամով և «Ինեսկոբանկը»՝ 16.9 մլրդ դրամով: Համակարգում հիփոթեքային վարկերի գծով առաջին հնգյակում են՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանը»՝ 21.9 մլրդ դրամով, որը կազմել է համակարգի հիփոթեքային վարկային պորտֆելի 26.0 %-ը, «Յունիբանկը»՝ 13.5 մլրդ դրամով (16.1 %-ը), «ՎՏԲ Հայաստան Բանկը»՝ 12.4 մլրդ դրամով (14.7 %-ը), ընդ որում երրորդ եռամսյակում «ՎՏԲ Հայաստան Բանկն» ապահովել է նաև հիփոթեքային վարկերի ծավալի ամենամեծ աճը, որը բացարձակ մեծությամբ կազմել է 2.1 մլրդ դրամ, «Կոնվերս Բանկը»՝ 4.7 մլրդ դրամով (5.6 %-ը) և «Արցախբանկը»՝ մոտ 3.6 մլրդ դրամով (4.3 %-ը): Պետական գանձապետական պարտատոմսերում ՀՀ-ում գործող բանկերից առավելագույն ներդրումներն ունեն «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանը»՝ 11.12 մլրդ դրամ և «ԱրմՍվիսԲանկը»՝ մոտ 9.55 մլրդ դրամ:


ՀՀ բանկային համակարգի ակտիվները և վարկային ներդրումները
2008 թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ

Մլրդ դրամ



2008 թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների ծավալը կազմել է մոտ 749.4 մլրդ դրամ, որը 3-րդ եռամսյակում աճել է 5.6 %-ով կամ 39.9 մլրդ դրամով: Համեմատության համար նշենք, որ վերոնշյալ ցուցանիշն անցած տարվա նույն եռամսյակում աճել էր 14.6 %-ով կամ 68.7 մլրդ դրամով: Ընդհանուր պարտավորությունների եռամսյակային աճը պայմանավորված է նաև բանկերի կողմից ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային ավանդների 7.0 % կամ 11.5 մլրդ դրամի չափով ավելացումով: Տեղին է նշել, որ հաշվետու եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց համախառն ավանդներն (ցպահանջ և ժամկետային) աճել են 3.2 %-ով կամ 7.8 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 248.4 մլրդ դրամ կամ ընդհանուր պարտավորությունների 33.1 %-ը: Համակարգի իրավաբանական անձանց համախառն ավանդները սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել են 236.6 մլրդ դրամ կամ ընդհանուր պարտավորությունների 31.6 %-ը, և եռամսյակի ընթացքում գրանցվել է 11.8 %-ի կամ 25.0 մլրդ դրամի չափով աճ, ընդ որում իրավաբանական անձանց ցպահանջ ավանդներն աճել են 28.7 %-ով կամ 34.1 մլրդ դրամով, իսկ ժամկետային ավանդները նվազել 9.9 %-ով կամ 9.2 մլրդ դրամով: Վերոնշյալին միայն ավելացնենք, որ ընթացիկ տարվա առաջին ինն ամիսների ընթացքում բանկերի ընդհանուր պարտավորություններն ավելացել են 21.2 %-ով կամ 131.3 մլրդ դրամով, այդ թվում ֆիզիկական անձանց համախառն ավանդները 25.1 %-ով կամ 49.9 մլրդ դրամով այն դեպքում, երբ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում ընդհանուր պարտավորություններն ավելացել էր 27.0 %-ով կամ 114.5 մլրդ դրամով, այդ թվում 16.2 %-ով կամ 23.4 մլրդ դրամով ավելացել էին ֆիզիկական անձանց համախառն ավանդները:

Համակարգի ցպահանջ և ժամկետային ավանդների կառուցվածքը
2008 թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ (մլրդ դրամ)




- Իրավաբանական անձանց ցպահանջ ավանդներ
- Ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներ
- Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ
- Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ

Միաժամանակ արձանագրենք, որ 3-րդ եռամսյակի վերջում ֆիզիկական անձանց համախառն ավանդների (ցպահանջ և ժամկետային) առավելագույն ծավալ գրանցվել է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի» կողմից՝ 51.8 մլրդ դրամ, երկրորդ ցուցանիշն ապահովել է «Յունիբանկը»՝ 37.9 մլրդ դրամ, իսկ երրորդը՝ «Արդշինինվեստբանկը»՝ 27.8 մլրդ դրամ, ընդ որում ժամկետային ավանդների գծով ամենամեծ ծավալ ապահովել է «Յունիբանկը»՝ 34.3 մլրդ դրամ, երկրորդ ցուցանիշը պատկանում է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանին»՝ 26.1 մլրդ դրամ, իսկ երրորդը՝ «Արդշինինվեստբանկին»՝ 22.3 մլրդ դրամ:

Երրորդ եռամսյակի կտրվածքով տոկոսային արտահայտությամբ ընդհանուր պարտավորությունների ամենամեծ աճ արձանագրվել է «ՊրոԿրեդիտ Բանկի» մոտ՝ 177.95 %, որը կազմել է 3.65 մլրդ դրամ, իսկ նվազումը՝ «ՎՏԲ Հայաստան Բանկի» մոտ՝ 17.29 % կամ բանկի ընդհանուր պարտավորությունները նվազել են 15.7 մլրդ դրամով: Սակայն պետք է նշել, որ ընդհանուր պարտավորությունների բացարձակ մեծությամբ առավելագույն աճ արձանագրվել է «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկի» մոտ, որը կազմել է 12.1 մլրդ դրամ, երկրորդ մեծությամբ աճը գրանցվել է «Արդշինինվեստբանկի» մոտ՝ 7.3 մլրդ դրամ: Իրավաբանական և ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային ավանդների ծավալով առաջատար բանկը «Արդշինինվեստբանկն» է՝ 46.8 մլրդ դրամով, այնուհետև նրան հաջորդում են «Յունիբանկը»՝ 39.0 մլրդ դրամով, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանը»՝ 32.6 մլրդ դրամով, «Կոնվերս Բանկը»՝ 22.3 մլրդ դրամով և «ՎՏԲ Հայաստան Բանկը»՝ 16.7 մլրդ դրամով: Եռամսյակային կտրվածքով վերոնշյալ ցուցանիշի ներգրավման լավագույն արդյունք ապահովել է «Յունիբանկը», որը բացարձակ մեծությամբ կազմել է 4.7 մլրդ դրամ:

ՀՀ բանկային համակարգի պարտավորությունները և ֆիզ. անձանց ավանդները (ցպահանջ և ժամկետային) 2008 թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ



ՀՀ բանկերի ընդհանուր կապիտալն ընթացիկ տարվա 3-րդ եռամսյակի ընթացքում աճել է 9.2 %-ով կամ 18.3 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 217.3 մլրդ դրամ, որը հիմնականում ապահովվել է բանկերի կողմից կուտակված շահույթի, ինչպես նաև կանոնադրական կապիտալի ավելացման հաշվին: Տեղին է նշել, որ ընդհանուր կապիտալը նախորդ տարվա նույն եռամսյակի ընթացքում աճել էր 6.1 %-ով կամ մոտ 8.6 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի բաղկացուցիչներից մեկը՝ կուտակված շահույթը, սույն տարվա հաշվետու եռամսյակի ընթացքում աճել է 16.1 %-ով կամ մոտ 8.1 մլրդ դրամով՝ եռամսյակի վերջում կազմելով 58.9 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 27.1 %-ը, ընդ որում նախորդ տարվա 3-րդ եռամսյակի ընթացքում կուտակված շահույթն ավելացել էր 5.1 %-ով կամ 1.8 մլրդ դրամով:

Ընդհանուր կապիտալի մյուս կարևոր բաղկացուցիչ մասը՝ կանոնադրական կապիտալը, հաշվետու եռամսյակի ընթացքում աճել է 8.1 %-ով կամ 10.6 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 142.3 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 65.5 %-ը: Համեմատության կարգով նշենք, որ 2007 թ.-ի 3-րդ եռամսյակի ընթացքում կանոնադրական կապիտալն ավելացել էր 6.8 %-ով կամ 6.2 մլրդ դրամով: Ասվածի հետ մեկտեղ նաև արձանագրենք, որ առաջին ինն ամիսների ընթացքում ընդհանուր կապիտալն աճել է 30.9 %-ով կամ 51.3 մլրդ դրամով, այդ թվում կանոնադրական կապիտալն աճել է 28.5 %-ով կամ 31.6 մլրդ դրամով, իսկ կուտակված շահույթը՝ 48.2 %-ով կամ 19.1 մլրդ դրամով: Համադրելիության համար նշենք, որ բանկերի ընդհանուր կապիտալը նախորդ տարվա առաջին ինն ամիսների ընթացքում աճել էր 23.6 %-ով կամ 28.4 մլրդ դրամով, այդ թվում կանոնադրական կապիտալը՝ 22.8 %-ով կամ 18.2 մլրդ դրամով և կուտակված շահույթը՝ 30.6 %-ով կամ 8.8 մլրդ դրամով:

Կուտակված շահույթի ցուցանիշով առաջատարը «Էլ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանն» է՝ 11.6 մլրդ դրամ գումարով, բանկը 2008 թ.-ի առաջին ինն ամիսների ընթացքում ապահովել է 32.0 %-ի աճ: Նրան անմիջապես հաջորդում են «Կոմվերս Բանկը»՝ 9.1 մլրդ դրամով (աճը 29.0 %) և «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկը»՝ 7.7 մլրդ դրամով (աճը 69.4 %): Հաշվետու եռամսյակի կտրվածքով կուտակված շահույթի նշանակալից աճ ապահովել է «Արդշինհիմնվեստբանկը»՝ 1.9 մլրդ դրամով:


Հաշվետու եռամսյակի ընթացքում համակարգի բանկերից կանոնադրական կապիտալը համարել է միայն «Ամերիաբանկը»՝ 11.6 մլրդ դրամով կամ 164.9 %-ով:

2008 թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ, ըստ ընդհանուր կապիտալի մեծության, առաջին հնգյակը կազմել են «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկը»՝ 24.8 մլրդ դրամով, «ՎՏԲ Հայաստան Բանկը»՝ 23.2 մլրդ դրամով, «Արդշինհիմնվեստբանկը»՝ 23.0 մլրդ դրամով, «Ամերիաբանկը»՝ 18.8 մլրդ դրամով և «Էլ-Էս-Բի-Սի Բանկ

Հայաստանը՝ 14.4 մլրդ դրամով: Հաշվետու եռամսյակի ընթացքում տոկոսային արտահայտությամբ ընդհանուր կապիտալի ամենաբարձր աճ է ապահովել «Ամերիաբանկը»՝ 138.3 %, երկրորդ ցուցանիշը ապահովել է «Արդշինինվեստբանկը»՝ 8.9 %, իսկ երրորդը՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանը»՝ 8.6 %:

ՀՀ բանկային համակարգի ընդհանուր կապիտալը, կանոնադրական կապիտալը և կուտակված շահույթը 2008 թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ

Մլրդ դրամ



ՀՀ բանկային համակարգում հաշվետու եռամսյակի ընթացքում ապահովվել է 7.8 մլրդ դրամ մաքուր շահույթ, որը 2007 թ.-ի 3-րդ եռամսյակում ստացված մաքուր շահույթի ծավալը գերազանցել է 1.2 մլրդ դրամով կամ 17.3 %-ով: Կարելի է արժանազորել, որ համակարգի չորս բանկեր երրորդ եռամսյակը փակել են վնասով, ընդ որում երրորդ եռամսյակի վնասը կազմել է 1.4 մլրդ դրամ (առաջին ինն ամիսների ընդհանուր վնասը կազմել է 2.4 մլրդ դրամ): Հարկ է նշել, որ 2008 թ.-ի առաջին ինն ամիսների ընթացքում համակարգի կողմից ապահովվել է 19.9 մլրդ դրամի մաքուր շահույթ, որը նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի ցուցանիշը գերազանցել է 18.2 %-ով կամ 3.1 մլրդ դրամով: Ընթացիկ տարվա 3-րդ եռամսյակի արդյունքներով համակարգի բանկերից մաքուր շահույթի առավելագույն ծավալ ապահովել է «Արդշինինվեստբանկը» 1.88 մլրդ դրամ, որը նախորդ եռամսյակի համանուն ցուցանիշը գերազանցել է 0.82 մլրդ դրամով կամ 77.4 %-ով, երկրորդ ցուցանիշը պատկանում է «ՎՏԲ Հայաստան Բանկին»՝ 1.32 մլրդ դրամ և երրորդ ցուցանիշը՝ «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկին»՝ 1.13 մլրդ դրամ: Առաջին ինն ամիսների ընթացքում ապահովված մաքուր շահույթի գծով առաջատար դիրքերում են՝ «Արդշինինվեստբանկը» 4.35 մլրդ դրամով, «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկը»՝ 3.25 մլրդ դրամով, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանը»՝ 2.82 մլրդ դրամով, «ՎՏԲ Հայաստան Բանկը»՝ 2.42 մլրդ դրամով և «Կոմպերս Բանկը»՝ 1.92 մլրդ դրամով, ընդ որում վերը թվարկված բանկերը գերազանցել են նախորդ տարվա առաջին ինն ամիսների համանուն ցուցանիշը: Այսպես, «Արդշինինվեստբանկը» գերազանցել է 1.18 մլրդ դրամով կամ 37.2 %-ով, «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկը»՝ 950.0 մլն դրամով կամ 41.2 %-ով, «Կոմպերս Բանկը»՝ 846.2 մլն դրամով կամ 78.7 %-ով, «ՎՏԲ Հայաստան Բանկը»՝ 1.76 մլրդ դրամով կամ 266.2 %-ով և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանը»՝ 273.5 մլն դրամով կամ 10.8 %-ով: Միևնույն ժամանակ նշենք, որ 3-րդ եռամսյակի ընթացքում բանկերի ընդհանուր եկամուտները կազմել են 44.0 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 34.0 մլրդ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համանուն ցուցանիշները գերազանցել են համապատասխանաբար 13.3 մլրդ դրամով կամ 43.4 %-ով և 11.7 մլրդ դրամով կամ 52.2 %-ով: Միաժամանակ նշենք, որ երրորդ եռամսյակում ապահովված հաշվեկշռային շահույթը գերազանցել է


նախորդ տարվա նույն եռամսյակի հաշվեկշռային շահույթի մեծությամբ մոտ 1.6 մլրդ դրամով կամ 19.7 %-ով և կազմել մոտ 10.0 մլրդ դրամ: Շարադրվածին միայն ավելացնենք, որ առաջին ինն ամիսների ընթացքում համակարգի կողմից ապահովվել է 115.8 մլրդ դրամի եկամուտ և կատարվել 90.3 մլրդ դրամի ծախս, իսկ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում վերոնշյալ ցուցանիշները համապատասխանաբար կազմել են՝ 81.8 և 61.1 մլրդ դրամ: Հաշվետու ինն ամիսների ընթացքում ստացված ընդհանուր եկամուտների և կատարված ընդհանուր ծախսերի գծով առաջատարը «Արդշինինվեստբանկն» է՝ 19.54 և 14.07 մլրդ դրամ գումարներով, իսկ հաշվեկշռային շահույթի ամենամեծ ծավալը նույնպես պատկանում է «Արդշինինվեստբանկին»՝ մոտ 5.48 մլրդ դրամ, երկրորդ տեղում է «ՎՏԲ Հայաստան Բանկը»՝ 14.51, 11.41 և 3.1 մլրդ դրամով և երրորդ տեղում՝ «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկը» համապատասխանաբար 13.33, 9.21 և 4.11 մլրդ դրամով:

2008 թ.-ի 3-րդ եռամսյակի արդյունքներով բանկերի ROE-ն՝ կապիտալի եկամտաբերության մակարդակը, սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել է 10.36 %, իսկ ROA-ն՝ ակտիվների շահութաբերության մակարդակը, նույն ժամկետի դրությամբ կազմել է 2.28 %: Պետք է արձանագրել, որ տեղի է ունեցել կապիտալի եկամտաբերության, ինչպես նաև ակտիվների շահութաբերության անկում անցած տարվա նույն ժամկետի համեմատ. ROE-ն նվազել է 2.58 տոկոսային կետով, իսկ ROA-ն՝ 0.58 տոկոսային կետով:

Վերը նշված առաջին (ROE) և երկրորդ (ROA) ցուցանիշների ամենաբարձր արդյունքներ եռամսյակի վերջում ապահովել է «Արդշինինվեստբանկը»՝ համապատասխանաբար 23.87 % և 4.09 %, ընդ որում նախորդ տարվա նույն ժամկետի համեմատ կապիտալի եկամտաբերության ամենաբարձր արդյունք նույնպես ապահովվել էր «Արդշինինվեստբանկի» կողմից, որը կազմել էր 31.31 %, իսկ ակտիվների շահութաբերության գծով՝ «Զարգ. Հայկական Բանկի » կողմից՝ 5.58 %:

ՀՀ բանկային համակարգի հիմնական ցուցանիշների գծով տեղեկությունները՝ ըստ բանկերի արտացոլված են աղյուսակ 1-ում:

ՀՀ բանկային համակարգի ամփոփ ցուցանիշները



2008 թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ հիմնական ցուցանիշները ըստ բանկերի,
դրանց աճը երրորդ եռամսյակի ընթացքում և բանկերի գրավված տեղը համակարգում

Աղյուսակ 1.
(մլն դրամ)

Բանկերի անվանումը	Ընդհանուր ակտիվները					Ընդհանուր պարտավորությունները					Ընդհանուր կապիտալը						
	Ընդհան- մենը	աճ/ նվազ (%)	Գրավ- ված տեղը համա- կարգ	այդ թվում		Ընդհան- մենը	աճ/ նվազ (%)	Գրավ- ված տեղը համա- կարգ	այդ թվում		Ընդհան- մենը	աճ/ նվազ (%)	Գրավ- ված տեղը համա- կարգ	այդ թվում			
				Վարկ. ներդր- ումները	աճ/ նվազ (%)				Ֆիզ.անձ ժամկ. ավանդ	աճ/ նվազ (%)				Կանոն. կապի- տալը	աճ/ նվազ (%)	Կուտ. շահույթ	Զբաշ- շահույթ I-III եռ.
2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19
Արդշինհիմնադրամ	117060,5	8,5	1	79765,8	8,6	94044,9	8,5	2	22305,6	16,2	23015,7	8,9	3	15513,6	0,0	5604,4	4351,5
Եյչ-Էս-Բի-Սի Բանկ Չայաստ.	108474,8	2,8	2	70130,3	10,5	94089,7	2,0	1	26141,5	11,7	14385,1	8,6	4	2437,6	0,0	11612,0	2816,3
ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ	101293,2	15,0	3	71848,8	8,6	76534,2	18,8	3	12470,4	4,1	24758,9	4,8	1	14567,2	0,0	7695,9	3254,5
ՎՏԲ Չայաստան Բանկ	98019,8	-12,8	4	74658,5	22,3	74841,1	-17,3	4	11746,0	-1,8	23178,8	6,0	2	13906,2	0,0	5240,6	2418,7
Յունիբանկ	68015,1	7,3	5	48873,8	20,4	59420,0	7,8	5	34343,5	13,2	8595,1	4,1	5	5599,7	0,0	2689,8	1571,7
Կոմվերս Բանկ	66826,2	7,3	6	38197,9	5,5	53859,5	7,9	6	14089,6	8,3	12966,7	5,2	9	1296,4	0,0	9112,3	1921,4
Չայեկոնոմբանկ	49604,8	3,6	7	27493,6	9,3	41112,8	4,3	7	5093,1	10,1	8492,0	0,4	8	2333,3	0,0	5753,5	277,5
Ամերիաբանկ	41815,5	38,0	8	23453,9	27,5	23003,9	2,6	12	2178,1	83,2	18811,6	138,2	11	17028,4	164,9	429,4	429,4
Ինտելոբանկ	41048,5	8,7	9	29028,0	6,1	33223,6	9,3	8	8525,9	-2,9	7824,9	6,6	14	2353,2	0,0	3839,9	1076,1
Չայբիզնեսբանկ	38241,1	13,3	10	25535,2	18,8	31389,1	15,4	9	9808,8	12,7	6852,0	4,6	12	5000,0	0,0	1733,5	759,4
Անելիք Բանկ	36444,8	-1,0	11	20449,6	2,4	30679,3	-1,5	10	7819,1	4,9	5765,5	2,0	15	5300,0	0,0	886,3	414,9
Արցախբանկ	31000,1	15,3	12	21609,8	18,3	25886,6	17,5	11	2862,7	-56,3	5113,6	5,5	19	2244,4	0,0	2323,0	493,5
Առեկսիմբանկ	30717,4	4,1	13	17643,8	37,0	20955,2	5,6	14	6911,3	-0,7	9762,2	1,0	22	8497,3	0,0	1060,5	223,0
Արարատբանկ	27925,9	11,1	14	13546,1	12,2	22456,1	13,0	13	2218,4	35,7	5469,7	3,9	10	4090,2	0,0	1109,6	552,6
ԱրմՍվինԲանկ	22823,6	2,0	15	8483,0	27,8	18845,2	2,0	15	1374,4	12,2	3978,3	2,0	6	3750,0	0,0	331,9	52,8
Պրոմեթեյ Բանկ	15864,2	10,9	16	10251,5	39,0	7109,3	24,0	19	936,2	1,1	8754,9	2,2	21	7200,0	0,0	1502,9	603,8
Զարգ. Չայկական Բանկ	15226,7	11,4	17	9279,3	7,1	10113,3	15,8	16	4251,6	14,7	5113,4	3,7	7	4206,6	0,0	474,5	419,4
Կասկադ Բանկ	13926,7	28,4	18	7637,1	17,3	8784,1	52,2	17	699,5	-15,3	5142,6	1,4	13	5535,0	0,0	-392,4	192,0
ԲՏԱ Ինվեստբանկ	12139,2	-8,7	19	9694,5	-1,4	8685,6	-0,1	18	655,5	13,7	3453,6	-24,9	18	5300,0	0,0	-1847,2	-1917,2
Սելլաթ Բանկ	11277,8	-0,9	20	4346,4	2,1	5327,8	-4,1	21	55,3	-61,0	5950,0	2,3	17	5500,0	0,0	395,1	395,0
Պրոկրեդիտ Բանկ	10883,1	49,9	21	7093,7	67,5	5689,4	178,0	20	643,9	127,1	5193,7	-0,3	16	5790,0	0,0	-596,3	-317,0
Բիբլոս Բանկ Չայաստան	8064,9	1,9	22	5141,7	45,5	3314,7	5,0	22	916,6	-17,4	4750,1	-0,1	20	4819,8	0,0	-85,7	-130,6
Ընդամենը	966693,9	6,4		624162,3	14,0	749365,4	5,6		176047,0	7,0	217328,4	9,2		142268,9	8,1	58873,5	19858,7